ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 10 >> ապրիլի 20 18 թվականի N 20-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Դեբետ համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ
ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 13 >> ապրիլի 20 18 թվականի N 21-Ա

ՀՈՎԻԿ ԽԱՉԱՏՐԱՅՆԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, հիմք ընդունելով Հովիկ Խաչատրյանի 2012թ. ապրիլի 20-ի դիմումը՝

որոշում եմ.

1. Հովիկ խաչատրյանին պատկանող 06-034-0111-0023 ծածկագրի տակ գտնվող 0,719 հա հողամասը 2012թ. ապրիլի 21-ից ճանաչել որպես համայնքային սեփականություն:
2. Դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանմանը հողամասը որպես համայնքային սեփականություն պետական գրանցման կատարելու համար:
3.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ

2018 թ. _____ ___
գ. Դեբետ